

շաղըութիւնը հրաւիրել Աղայեանի Հ. լեզուի դասագրքերի մեջ կողմի վրայ, որով նա ամենից շուտ և յաջող կերպով է մանկավարժական գործի նպատակայարմարութիւնը երաշխաւորում. -դա հայ երկրագործի, արհետաւորի կեանքն է, որը խորթէ կեղծ կլասիկ և ոռմանտիկ գրականութեան ոգուն. Աղայեանը գիւղական կեանքի բազմակողմանի նկարագրութեանը ոչ միայն իւր դասագրքերում է մեծ տեղ տալիս, այլ և դասագրքերից դուրս մնացած բազմաթիւ ոտանաւորների, հեքեաթների և այլ ընթերցանութեան գրքերի մէջ. Այս կարեւոր խնդրի վրայ ես մանրամասնօրէն կանդ չեմ առնում, որովհետեւ նախ, որ իւր չափաղանց պարզ լինելու պատճառով ամենքի համար հասկանալի է, և երկրորդ, որ այս մասին շատ է խօսուել թէ՝ ոլարքերական մամուլում և թէ առանձին գրքերում, մանաւանդ. որ «Արարատ»-ի էջերնը էլ իրենց սղութեան պատճառով արգելք են հանդիսանում. կարելի էր խօսել Աղայեանի մասին որպէս հրապարակախօսի, բայց դրա համար էլ հարկաւոր է, որ որոշ ժամանակ անցնի, որպէս զի անձնական համակրանքի ու հակակրանքի խնդիրը վերանայ, որով միայն կարելի կլինի Աղայեանի հրապարակախօսական ճիշտ պատկերը հրապարակ բերել:

Այսքանով մենք վերջացնում ենք մեր ասելիքը հանգուցեալի մասին, յաւիտենական հանդիսատ մաղթելով:

Վերջ

Արել Արեդայ



ՊԵՂՈՒՄՆԵՐ ՊԵՇՏՈՒՄՈՒՄ

(Բակազъ (№ 184)).

Ո՞ւմ յայտնի չեն վարդերի հին քաղաքի Պեստումի, իրանց միայնութեան մէջ. հոյակառ և ահազին նշանաւոր տաճարները. պատմական աւանդութիւնները ասում են, որ այս երեմն յունական, ծաղկած քաղաքը մինչև հիմքը կործանուեց նորմաններից ու Սարակինոսներից. Մինչդեռ այժմ, երբ Պեստումում սկսուել են պեղումներ, ամեն հաւանականութիւն կայ մտածելու, որ քաղաքը կարող է հանդիսանալ նոր Պօմպէա. Նէապօլիտանիայի թանկարանի տեսուչ Սալիննացոլան վերջին երեք տարիւները վարում է Պեստումում սկեղումներ որոշ ծրագրով,

որ տուել է արդէն լաւ հետևանքներ։ Գուշակելով, որ
ահագին տաճարները գտնուում են նոյն իսկ քաղաքում,
պեղումները նրանց շուրջն էլ սկսուել են, և շուտով գտել
են մի փողոց 12 մետր լայնութեամբ, շատ լաւ յատա-
կած մեծ սալերով, ինչպէս այդ հնումն սովորութիւն էր։
Այս փողոցը կամ ճանապարհը արդէն պեղուած է 150
մետր։ Դեկավարուելով ժասամբ դեռ պահպանուած սիւ-
ների բեկորներով, որոնք տեղ տեղ սփռուած են դաշտի-
երեսին, ժասամբ էլ ներքին բնազդմամբ, Սպիննացոլան
գտաւ նոյնպէս քաղաքի մի ուրիշ երակ, որ ընդհատում
է գլխաւոր փողոցը և անցնում է արեւելքից դէպի արե-
մուտք։ Խաչածեն կորուածքում բացուել է մի մեծ շի-
նութիւն, որ ճակատի կողմում ունի 20 սիւն, անդրիա-
զարդ մուտքով ու դահլիճով, որ երկարութեամբ 30 ու
լայնութեամբ 18 մետր է և պատերում վեց նիշեր (խորշ)
ունի։ Վերջիններից մէկում կար մի անդրի, պեղում-
ների ժամանակ վայր ընկած, բայց բարերազգաբար ան-
վիաս մնացած։ Անդրին ինչպէս երեւց, Կղովդիոս կայս-
րինն է, ծայրագոյն քահանայապետի զգեստով։ Նա 2, 10
մետր մեծութիւն ունի և նուր, գերազանց քանդակից
գտաելով, պէտք է որ յոյն քանդակագործի քանդակ
լինի։ Յամենայն դէպի հնութիւնից մնացած ամենալաւ
անդրիներից մէկն է այդ և ամենաբնորոշը Կղովդիոսի հա-
մար, որ մեծապէս բամբասուած է Սվետոնիոսից կայսրի
արտայայտութիւնը լի է ազնուութեամբ, բայց մի քիչ
տիսուր է։ Հոգեբանները կարող են այս անդրիից աշխա-
տել որոշել, թէ որսկիսի ոք էր Կղովդիոս, յիմար, թէ խե-
լացի, ազնիւ ու ճարտարաբան հռետոր թէ ծիծաղելի
ոնդեղիւր։ Անդրին վերաբերում է Կղովդիոսի կառավա-
րութեան առաջին տարիներին, այսինքն 42-45 թ. Ճ.
Քրիստոսի։

Բացի Պետումի պեղումներից, պեղումներ սկսուած
են Պետյանիայում էլ, որ Պետումից առաջ է հիմնուել,
և բոլորովին ծովափին է ընկած. Այստեղ նոյնպէս զբա-
նուած են շատ արժեքաւոր առարկաներ, որոնց մէջ կան
նաև նախապատմական շրջանի-քարի և բրոնզի գարերի.

Ծուխի Արժեալիսկապատճեն